ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 12 » Փետրվարի 2025 թվականի N: 38 -Ա քաղաք Գյումրի

«ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի և «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 01028873 գործունեության հասցե ք. Երևան, Նոր Նորք 0090,Գայի պ"/Շ/11/20, էլ հասցե FOODCITYAVAN@yandex.ru) միջև 2024 թվականի սեպտեմբերի 3-ին կնքվել է «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/14-11» ծածկագրով «Պետության կարիքների համար ՀՀ Շիրակի մարզի համայնքների թվով 19 մանկապարտեզներին անհրաժեշտ ձայներիզների նվագարկիչների, սպասք լվացող սարքերի, լվացքի մեքենաների, հագուստի չորանոցների մատակարարման» պայմանագիր, իսկ 2024 թվականի սեպտեմբերի 6-ին կնքվել է «ՀՀ ՇՄԱ ԳՀԱՊՁԲ-24/11»-2 ծածկագրով «Պետության կարիքների համար օդափոխման համակարգերի մատակարարման» պայմանագիր, որոնց համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել ապրանքների տեխնիկական բնութագրերով և գնման-վճարման ժամանակացույցերով նախատեսված ապրանքներ: Սակայն վաճառողը հրաժարվել է պայամանգրերով սահմանված ժամկետներում իրականացնել ապրանքների մատակարարում՝ չմատակարարելով վերը նշված ապրանքները խախատել է պայամանգրերով սահմանված վաճառողի պարտավորությունները:

«ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/14-11» և «ՀՀ ՇՄԱ ԳՀԱՊՁԲ-24/11»-2 ծածկագրերով պայմանագրերի 2.1.7 կետերի համաձայն պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագիրը, քանի որ վաճառողը խախտել է պայմանագրի 2.1.1 կետի դրույթները՝ մատակարարման ժամանակացույցերը և որի հիմքող միակողմանի ամբողջությամբ լուծարվել է «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի հետ կնքված «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/14-11» և «ՀՀ ՇՄԱ ԳՀԱՊՁԲ-24/11»-2 ծածկագրերով պայմանագրերը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 17-րդ մասի դ) կետի համաձայն, եթե կնքված պայմանագիրը լուծարվում է չկատարելու հիմքով, ապա մասնակցից գանձվում է որակավորման և պայամագրի ապահովում:

«Ֆուդսիթի» ՍՊԸ-ն կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատրման համար որպես որակավորման և պայմանագրի ապահովումներ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ է ներկայացրել տուժանքի համաձայնագրեր և կից վճարման պահանջագրեր՝ լրացված և հաստատված ընկերության կողմից:

Պայմանագրերը միակողմանի լուծելու, ինչպես նաև որակավորման և պայանագարի ապահովումներ գանձելու մասին համապատասխանաբար 23.01.2025 թվականին և 27.01.2025 թվականին ծանուցվել է մասնակցին, ինչպես նաև ծանուցումը հրապարակվել է gnumner.minfin.am պաշտոնական կայքում:

Քանի որ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն հանդիսացել է «Ֆուդսիթի» ՍՊ ընկերությանը սպասարկող բանկ, ուստի «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը և վճարման պահանջագրերը 2025 թվականի հունվարի 29-ի թիվ 03//00813-2025 գրությամբ ներկայացվել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ՝ «Ֆուդսիթի» ՍՊԸ-ից գանձելու «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/14-11» ծածկագրով պայմանագրի համար որակավորման ապահովում՝ 5013000 (հինգ միլիոն տասներեք հազար) ՀՀ դրամ և պայմանագրի ապահովում՝ 3342000 (երեք միլիոն երեք հարյու քառասուներկու հազար) ՀՀ դրամ, «ՀՀ ՇՄԱ ԳՀԱՊՁԲ-24/11»-2 ծածկագրով պայմանագրի համար որակավորման ապահովում՝ 288000 (երկու հարյուր ութսունութ) ՀՀ դրամ և պայմանագրի ապահովում՝ 192000 (մեկ հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ:

Ընդամենը երկու պայամանգրերի համար միասին «Ֆուդսիթի» ՍՊԸ-ից գանձվելու էր որակավորման ապահովում՝ 5301000 (հինգ միլիոն երեք հարյուր մեկ հազար) ՀՀ դրամ, պայմանագրի ապահովում՝ 3534000 (երեք միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ:

Ի պատասխան մեր գրության «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն 2025 թվականի փետրվարի 4-ի N 0186/0132 գրութամբ հայտնել է, որ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում սպասարկվող հաշվում առկա չեն բավարար միջոցներ պահանջագրերում նշված գումարի չափով փոխանցում կատարելու համար:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Հաշվի առնելով, որ առկա են «Ֆուդսիթի» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.«Ֆուդսիթի» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշումը կայացնելու օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝